



Ազգարարութեան Trumpet's Sound Վիոլին

58-րդ ՏՄԻ, ՄԱՍԹԱԼԵԱ
ՄԱՅԻՆ - ՀՈՒնիս 2022



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՂ»
Երկամսյա հոգեւոր քերթ

Պատասխանատու խմբագիր՝
հովիտ Հրաչ Գույուճեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



Բովանդակութիւն

Աւետարանը	3
<i>Հովիտ Հրաչ Գույուճեան</i>	
Աստուծոյ պարգևն ու մենք	6
<i>Ակրս Տիրապ</i>	
Աստուած մեր Յայրը	8
<i>Հովիտ Արք Գույուճեան</i>	
Ուր որ Դուն Կ'ուզես Տէր	12
<i>Քաղուած</i>	
ACM-ի լուրեր	16
<i>ԱՍՏ</i>	

Կը Խնդրենք աղօթել՝

- այս անհանգիստ աշխարհի խաղաղութեան համար,
- մեզ շրջապատող սիրելիներու հոգիներու փրկութեան համար,
- Աւետարանի պատգամի ընդունելութեան համար,
- 2022 թ.-ի Յուլիսին Յայսաստան այցելող միսիոնարական խումբի ծառայութեան համար,
- մեր խնամքի տակ գտնուող բոլոր ընտանիքներուն համար,
- հիւանդներու եւ տկարներու համար,
- դաշտին մէջ գտնուող մեր գործակիցներու համար, մինչ անոնք օգնութեան ձեռք կը մեկնեն բազմաթիւ կորած հոգիներու:

Կազմի նկարը՝ Հանրապետութեան հրապարակ, ACM, Օգոստոս 2007թ.:

Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով։

Աւետարանը

Ան ըսաւ անոնց. «Գացէ՛ք բոլոր աշխարհ ու աւետարանը քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն: Ան որ հաւատայ ու մկրտուի՝ պիտի փրկուի եւ ան որ չհաւատայ՝ պիտի դատապարտուի» (Մարկ. 16:15-16):

Ի՞նչ է Աւետարանը

Աւետարանը մեր Տէր Յիսուս Քրիստոսի բարի լուրն է:

«Տէր Եհովային Հոգին իմ վրաս է, վասն զի Տէրը զիս օծեց ու զիս դրկեց աղքատներուն աւետիս տալու, կոտրած սիրտ ունեցողները բժշկելու, գերիներուն՝ ազատութիւն եւ բանտարկեալներուն բանտին բացուիլը հրատարակելու» (Եսայեայ 61:1):

«Յիսուս կը պտրտէր բոլոր քաղաքներն ու գիւղերը եւ անոնց ժողովարաններուն մէջ կը սորվեցնէր ու կը քարոզէր արքայութեան աւետարանը եւ կը բժշկէր բոլոր ախտերն ու բոլոր հիւանդութիւնները ժողովուրդին մէջ» (Մատթ. 9:35):

«Կոյրերը կը տեսնեն, կաղերը կը քալեն, բորստները կը մաքրուին, խուլերը կը լսեն, մեռելները յարութիւն կ'առնեն ու աղքատներուն աւետարան կը քարոզուի» (Մատթ. 11:5):

Փրկիչը ծնաւ, Անոր անունը Էմմանուէլ պիտի կոչեն (Աստուած մեզ հետ):

- Ան եկաւ կորսուածին փնտռելու,
- Ան եկաւ մեղատրին փրկելու,
- Ան եկաւ, որպէսզի կեանք ունենանք եւ ալ աւելին:

Ինչո՞ւ Աւետարանի կարիքն ունինք

Աշխարհի վիճակին նայելով այսօր կրնամք հասկնալ, թէ ինչու Յիսուսը եկաւ: Ան եկաւ, քանի որ բոլորս մեղանչեցինք, ոչինչ չէ փոխուած, մարդիկ եսասէր, հպարտ, ազահ են, անոնց մէջ ոչ մէկ լաւ բան չի բնակիր, զոհաբերութիւնները չերիքեցին, անոնց բափուած արիւնը

բաւարար չեղաւ: Միայն Յիսուսի արիւնը կրնայ մաքրել մեզ մեր բոլոր մեղքերէն: Ասիկա է Աւետարանը:

Աւետարանը երբեք չի փոխուիր, այն նոյնն էր, նոյնն է եւ նոյնը պիտի մնայ:

«Ուրիշ մեկո՞վ փրկութիւն չկայ. վասն զի անկէ զատ ուրիշ անուն մը չկայ երկնքի տակ՝ մարդոց մէջ տրուած, որով կարող ըլլանք փրկութիւ» (Գործ 4:12):

Օ՛, աշխարհս որքան կարիքն ունի Յիսուսին, որքա՞ն ընկած ենք շնորհքէն: Բայց փրկութեան դուռը լայն բաց է: Սիրելի՛ հաւատացեալներ, Աւետարանը տարեք աշխարհ, ինչպէս այն փոխեց մեզ, աշխարհին ալ կրնայ փոխել, քանի որ Աւետարանը միայն խօսքեր չէ, Աւետարանը Աստուծոյ Հոգիով լեցուած զօրութիւն է, այն երկայրի սուր է, որը կը թափանցէ մեղաւորի սիրտը:

Մենք ընկած տղամարդիկ ու կանայք ենք, ովքեր փրկութեան կարիք ունին:

Մեծահարուստը դժոխքէն աղաղակեց լսելով. «Հայր Աբրահամ, ողորմէ ինձի ու դրկէ Նազարոսը, որպէս զի իր մատին ծայրը ջուրը թարխէ ու զովացնէ իմ լեզուս, վասն զի այս բոցին մէջ կը տանջուիմ» (Ղուկ. 16:24):

Աւետարանը միակ ճանապարհն է դէպի Ջրիստոս, մարդկութեան միակ յոյսը, միակ ճշմարտութիւնը: Եկէք Յիսուսին, քանի որ փրկութեան դուռը լայն բաց է այսօր ձեզի համար:

Ինչո՞ւ շատ մարդիկ իրենց կեանքերը զոհեցին Աւետարանին համար

Բոլոր առաքեալները իրենց կեանքը զոհեցին Աւետարանին համար: Վաղ եկեղեցիի հաւատացեալներէն շատերը առիւծներուն առջեւ նետուեցան, շատերը նահատակուեցան Ջրիստոսի համար, քանի որ Աւետարանը կեանքեր կը փոխէ, մարդկանց կը փոխէ, այն կարող է նաև թեզ փոխել:

Ես նոյնպէս մեղաւոր էի, ով պատանեկութեան տարիներուն Ջրիստոսին եկաւ, բայց այս Յիսուսը կոտրեց զիս, Ան ձեւաւորեց զիս եւ նոր դարձուց իր մէջ: Ինձի համար ապրիլ Ջրիստոս է, ես երբեք ափսանքով ես չեմ նայիր մեղքի ստրկութեան տարիներուն, ես նոր արա-

րած եմ Քրիստոսվ, ասիկա այն տեղն է, որտեղ կը պատկանիմ, եւ այստեղ ես կ'ուզեմ մնալ:

Ան ամէն առաօտ նոր երգ կ'ուտայ զիս, նոր յոյս ընթացքս շարունակելու համար, Ան հոգիս կը նորոգէ, իմ բաժակս խիստ լեցուն է, ես Իր խաղաղութեան մէջ եմ:

Ան Իր սէրը ցոյց տուալ խաչին վրայ, Ան մահացաւ, որպէսի մենք կեանք ունենանք: Ան ծրի փրկութիւն բերաւ բոլոր մարդկանց համար: Ան Իր շնորհը ցոյց տուալ, երբ բոլորս մեղաւոր էինք: Քրիստոսը սիրեց մեզ:

Ո՞րն է մեր պատասխանատութիւնը Աւետարանին նկատմամբ, որպէս հաւատացեալներ

- Երբ գեղեցիկ ծաղիկ մը կը տեսնեմ, ես կ'ուզեմ կիսուիլ այն ուրիշներուն հետ:
- Երբ սքանչելի նորութիւն մը կը լսեմ, ես կ'ուզեմ պատմել այն ուրիշներուն:
- Երբ համեղ ուտեստ կ'ուտեմ, ես կ'ուզեմ, որ որիշներն ալ համտեսն այն:

Դաւիթ ըսաւ. «Որչա՞վ քաղցր է քու խօսքդ իմ քիմքիս, մեղրէն աւելի անյշ է իմ բերնիս» (Սաղ. 119:103):

Ի՞նչ պէտք է ընենք Աւետարանին հետ

Ձեր սրտին մէջ պահէք այն, ձեր ճակատին վրայ գրէք, շարունակեցէք բարի լուրը տարածել ուրիշներուն, յիշէք, որ ասիկա Իր պատուիրանն է իրաքանչիւր հաւատացեալին ուղղուած: Մեր պարտքն է Տիրոց առջեւ Աւետարանը՝ բարի լուրի պատգամը հասցնել մարդկանց. Երիտասարդներուն ու մեծերուն, աղքատներուն եւ հարուստներուն, մեղաւորներուն՝ ապաշխարութեան համար, ամբարիշտներուն՝ փրկութեան համար, քանի որ Իր գալուստը մօս է, հաւատացեալները պատրաստ են յափշտակութեան, իսկ միւսնե՞րը: Ո՞վ պիտի պատմէ անոնց Աւետարանի բարի լուրի մասին:

Հ. Գ.

Աստուծոյ պարզեւն ու մենք

 աւանաբար, մեզմէ շատերու համար ճիշտ է, որ աւելի շատ կը նախընտրենք նուիրել, քան նուէր ստանալ: Դուք կը կասկածի՞ք: Մտածէ՞ք բարեգործական կազմակերպութիւններուն նուիրատուութիւններ կատարելու մասին: Արդեօք կը նախընտրէիք նուիրատո՞ւ ըլլալ, թէ՝ նուէր ստացող: Նուէր ստանալը դժուար է, նուէր ընդունիլը բուլութեան եւ կարիքի ընդունում է: Դուք անզօր վիճակի մէջ եք՝ կախուած աւելի մեծ ֆինանսական ուժ ունեցող մարդու առատաձեռնութիւննեն կամ քմահաճոյքէն: Դուք չէք վերահսկեր այն ինչ պիտի ստանաք, միայն տուողը ունի այդ իրաւունքը, եւ սա այն դիրքն է, որը բոլորս կը նախընտրենք գտնուիլ: Հետաքրքիր է, արդեօք սա՝ է պատճառը, թէ ինչու երբ ինչ-որ մէկը մեզի նուէր կուտայ կամ մեզի բարիք կ'ընէ, մենք կը սկսինք ծրագրել, թէ ինչով պիտի փոխադարձնենք այն: Բոլոր յարաբերութիւններուն մէջ տալու եւ ստանալու բնական մակրներացութիւնը նկատելի է, որն օգտակար է ու ճիշտ: Այնուամենայնիւ, մենք բոլորս կը ճանշնանք մարդկանց, որոնց անհնար է բարիք ընել կամ նուէր տալ առանց ասոր դիմաց շուտով ինչ-որ կերպով փոխադարձը ստանալու: Այն աւելի շատ նման է պումերանգի, որը երբեք չես կրնալ անջատել: Այն կը շարունակէ վերադառնալ: Կը բուայ, թէ մեր յարաբերութիւնները աւելի նման են շուկայական յարաբերութիւններուն, որտեղ շատ կարեւոր է պատշաճ առեւտրային հաւասարակշռութիւն պահպանելը:

Երեկի ճիշտ է ըսել, որ մենք աւելի շատ նուէրներ կը փոխանակենք, քան կուտանք: Մեզմէ քանինե՞րը Սուրբ Ծննդեղէն մի քանի օր առաջ շտապած են Սուրբ Ծննդեան քարտ ուղարկել այն անձին, որմէ շնորհաւորական քարտ ստացած են, եւ մոռցած են իրեն շնորհաւորելը: Հաշիր հաւասար պահելը այնքան կարեւոր է: Մենք այնքան դժուար կ'ընդունիք այդ քարտը, որպէս քարի մեսս դիմացնի կողմէն: Մենք մեր մէջ կը մտածենք, թէ պէտք է անպայման քարտը քարտով պատասխանենք, որպէսզի պահպանենք առեւտուրի հաւասարակշռութիւնը:

Իսկապէս ձրի նուէրի գաղափարն այնքան խորը է մեր մշակոյթին, որ անհրաժեշտ է Սուրբ Հոգիի յայտնութիւնը՝ օգնելու մեզ հասկնալ:

թէ Աստուած ինչ ձրի պարզեւ տուաւ մեզի. «Հոգին, որ Աստուծմէ է. Որ պէսզի մենք ճանշնանք այն բաները որոնք Աստուծմէ տրուեցան մեզի» (Ա Կորնթ. 2:12):

Այս շուկայական փոխարարերութիւններու աշխարհի մէջ ապրիլը կը խանգարէ մեզ հասկնալու եւ ընդունելու Աստուծոյ անսահման առատաձեռնութիւնը, որուն չենք կրնար փոխադարձել: Աստուծոյ հետ առեւտուրի մտնելը անհնարին է, եւ այնուամենայնի զարմանալի է, թէ որքան յաճախ այդպէս կը փորձենք ընել:

Կը խորիիմ թէ Գողգոթայի վրայ Աստուծոյ ցուցաբերած սքանչելի պարզեիմ երկու հնարաւոր պատասխան կայ: Առաջինը՝ Աստուծոյ հետ շուկայական յարաբերութիւն նշակելն է: Այդպիսի անձը կը դրժուարանայ խոնարհութեան դիրք ընդունիլ: Ան յաճախ իր սեփական միջոցները կը գրգռէ, յաճախ անզիտակցարար, որպէսզի Աստուծոյ ինչ-որ կերպով հատուցան: Ան կարծես, իսկապէս չէ ստացած Աստուծոյ պարզեւը եւ անզիտակցարար կը փորձէ վերադարձնել այս՝ ծառայութեան կամ որեւէ այլ տեսքով: Իրեն հաճելի չէ Աստուծոյ առատաձեռնութիւնը, խոնարի գտնուիլը, կախուածութեան մէջ ըլլալու դերը: Նման վերաբերմունք ունեցող անձը քրիստոնէական ծառայութեանը կը մօտենայ ոչ թէ ի սրտէ այլ ի պարտականութիւնէ:

Երկրորդը՝ Աստուծոյ տուած պարզեւը պատրաստակամօրէն ընդունիլն է: Այդպիսի մարդիկ իրենց ձեռքերը Աստուծոյ առաջ պարզած կ'ապրին: Անոնք զոհ ու համաձայն են, որ Աստուած ըլլայ իրենց կեանքին մէջ տուող կողմը: Անոնք զիտեն, թէ երբեք չեն կրնար հաւասարի Աստուծոյ եւ զոհ են խոնարիի դիրք գրաւելով՝ կախուած Անոյ շնորհքէն: Այս տեսակի կեանքէն դուրս կը հոսի ոչ միայն հնագանդ ծառայութիւն, այլ զօրացնող, բուժիչ ազդեցութիւն, որը կը դիպչի ու կը փոխէ իրենց շրջապատող մարդկանց կեանքերը:

Անընդհատ «ընդունող» կողմը գտնուիլը արդիւնաւէտ կեանքի եւ ծառայութեան բանալին է:

Ուես Տիրլաւ



Աստուած՝ մեր Հայրը

Սաղմոս 103:13-22

Աշակերտները իրենց Տերոջմէն՝ Յիսուսէ խնդրեցին որ իրենց աղօքքը ընել սորվեցնէ: Յիսուս ալ ըստ որ երբ աղօքք ընեն, ըստն. «Ով Հայր որ Երկինքն ես...»: Ամէն անձ չի կրնար Աստուածոյ «Հայր» կանչել, եթէ վերատին ծնունդ ունեցած չէ: Միայն անոնք որոնք զԻնք կ'ընդունին անոնց Հայր կ'ըլլայ: Աստուած բոլորին Աստուածն է, քայց Ան բոլորին Հայրը չէ:

Աստուած տարբեր անուններով Ինքզինք յայտնած է մեզի: Աստուածոյ անունները իմաստալից են եւ ամէն անունի ետեւ խորհուրդ մը կայ: Անոնք Աստուածոյ անձը կը ներկայացնեն մեզի: Այս անուններէն ոմանք Աստուածոյ մեծութիւնն ու փառքը կը պատմեն մեզի, իսկ մի քանի ուրիշներ մեզ կրնան անհանգիստ ընել: Օրինակի համար երբ ըստնք. «Արդար Աստուած»՝ մեր յանցանքները, մեր անօրէնութիւնները եւ վերջին դատաստանը կը յիշենք: Երբ ըստնք. «Սուրբ Աստուած» մեր մեղքերը կը յիշենք: Երբ «Զօրաց Տեր» եւ «Ամենակարող Աստուած» ըստնք՝ այդ վախ կ'ազդէ մեր վրայ: Երբ ըստնք «Աստուած մաշող կրակ է», պահ մը կը կծկուինք, քայց երբ ըստնք. «Այս մեծ եւ ահարկու Աստուածը Տեր Յիսուսը մեր Երկնաւոր Հայրն է», սքանչելի կացութիւն մը կը ստեղծուի մեզի համար – մեր այլկուած ջիխերը կը հանդարտին եւ մեր վախսերը կը փարատին: Հայր անունը անուշ կը հնչէ մարդ արարածին, այն կը վանէ մարդուն կասկածները եւ կը կազդրուէ անոր մարած հոգին, ինչպէս բազմութեան մէջ կորսուած մանուկը իր հօր ձայնը լսելով ուրախութեամբ եւ նոյն ատեն հեծկլտալով կը նետուի անոր գիրկը: «Հայրիկ» անունը շատ յիշատակներ կը բերէ մեզի մեր մամկութեան օրերէն – թէ ինչպէս հայրիկը կը հոգար ու կը գուրզուրար մեր վրայ: Սաղմոս 103:13 կ'ըսէ. «Ինչպէս հայր մը կը գքայ իր որդիններուն վրայ, այնպէս Տերը կը գքայ իրմէ վախցողներուն վրայ»: «Հայր» ամուան հիմքը սէրն է: Հայր Աստուած մեզի համդեա Իր ունեցած սիրոյն համար Իր Միածին Որդին խաչը յանձնեց մեր մեղքերուն համար: Աստուածոյ սէրը անկեղծ է, հարազատ է, անշահախնդիր է: Երբ սէրը վերցնենք Աստուածոյ անունէն Ան կը դադրի Հայր ըլլալէ, եւ կ'ըլլայ միայն Ամենակարող Աստուած, Ամենագէտ Աստուած, Ամենա-

տես Աստուած, Սուրբ Աստուած, Արդար Աստուած, բայց ո՛չ Հայր Աստուած. մենք այսախի Աստուծոյ դիմացը կայնելու համարձակութիւնը պիտի չ'ունենայինք, Իր հետ յարաբերելու կարող պիտի չ'ըլլայինք, եթէ Ան Հայր Աստուած չ'ըլլար մեզի: Մենք պէտք ունինք Աստուծոյ մը որ մեր տկարութիւնները կը հասկնայ, կը յիշէ որ հող ենք, կ'ողորմի ու կը գրայ մեր վրայ, եւ մեր Փրկիչը մեզի կը ներկայացնէ մեր փնտռած Աստուածը – երբ աղօքք կ'ընեք, ըստք. «Ո՛վ Հայր մեր, որ Երկինքն ես»:

Կեանքի դժուարութիւնները եւ նեղութիւնները մեր բոլորին համար են, սակայն հաւատացեալը երբ մութ օրերու մէջ կը գտնուի քնաւ պէտք չէ կասկածի Աստուծոյ սիրոյն վրայ, եթէ այդ վատահութիւնը չ'ունենայ. Աստուծոյ վարմունքը իրեն հանդէալ շատ անհասկանալի պիտի ըլլայ ու սխալ կարծիքներ պիտի ունենայ Աստուծոյ սիրոյն նկատմամբ: Երբ օր մը Երկնաւոր Հօր ձեռքէն ծրար մը ստանայ որուն մէջ գտնէ գաւազան, դառն բաժակ, հիւանդութիւն, ճախողութիւն, նեղութիւն, սուզ ու արցունք, ու Աստուծոյ սէրը ճանչցած չ'ըլլայ՝ պիտի ըսէ այս իմ Հայրս չէ, այս իմ Աստուածս չէ: Գերսեմանի պարտէզին մէջ Աստուած դառն բաժակ հրամցուց Իր Սիածին Որդույն: Յիսուս ընդունեց խաչին անգործ ստորին մահը եւ դառն բաժակը, որովհետեւ վստահ էր որ զայն հրամցնողը Իր Հայրն էր. «Հայր» ըսաւ «եթէ կ'ուզես այս զաւարը ինձմէ անցուր, բայց ոչ թէ Իմ կամքս ըլլայ, հապա Քու կամքդ»: Ան ժողովուրդին առաջնորդներուն կողմէ հալածունեցաւ, իրեններուն կողմէ լրունեցաւ, ֆիզիքական եւ մտային անտանելի տառապանքներու մէջ գտնունեցաւ, սակայն Իր միսիթարութիւնը, Իր համբերութիւնը, Իր յոյսը Իր Երկնաւոր Հօր մէջ գտաւ:

Սէրը անհրաժեշտ եւ հիմնական հօրենական յատկութիւն մըն է, սակայն հայր մը ուրիշ յատկութիւններ ալ պէտք է ունենայ: Բ Օր. 32:10-13-ին մէջ կը կարդանք իմշակէ Աստուած Իր ժողովուրդը՝ Խրայէլլ, հակառակ անոր որ Իր դէմ անհնազանդ գտնունեցան, անոնց խրատեց, պաշտպանեց, աշքին բիրին պէս պահեց, արտերուն պտուղը կերցուց, վէմէն մեղը եւ իոլ հայրայրեց, ոչխարճներու եւ կովերու կար խրնցուց, ցորենի ընտիր ալիւրով զանոնք կերակրեց, եւ խաղողի գինիով անոնց հոգինները ուրախացուց: Հօր մը համար հաճելի պարտականութիւն է իր զաւակներուն պէտքերը հոգալ: Անոնց ուրախութիւնը իր ուրախութիւնն է, անոնց ցաւը իր ցաւն է, սակայն մարմնաւոր հայր

մը, որքան որ լաւ տրամադրուած ըլլայ իր զաւակներուն հանդէավ տկարութիւններ ունի եւ հակառակ իր կամքին եւ փափաքին, յաճախ կը ձախողի իր պարտականութիւններուն մէջ, բայց հաւատացեալին Երկնաւոր Հօր սէրը ու Անոր հոգատարութիւննը կատարեալ է: Ան խոստացած է ոչ մէկ բարիք զլանալ Իր զաւակներուն, որոնք զինք կը յարգեն, Իրմէ կը վախնան ու Իր ճամբաններուն մէջ կը քալեն: Սակայն, ի մտի ունենանք որ Աստուծոյ օրինութիւնները ստանալու համար մեզի պայմաններ կան: Բ Օրինաց 28-րդ գիշուն մէջ Աստուծ Իր ժողովուրդին այսպէս ըսաւ. «Եթէ քո Տէր Աստուծոյդ խօսքին հնագանդիս, այս բոլոր օրինութիւնները քեզի պիտի հասնի»:

Հայր մը ունի նաև տարբեր յատկութիւն մը – ան իր զաւակները կը կրիէ: Անոնց ուսում եւ զարգացում կը հայթայրէ: Մանուկը պէտք է աճի, մեծնայ ու զօրանայ թէ մարմնապէս, թէ մտային կերպով եւ թէ հոգեւորապէս, որպէսզի նկարագիրը կերտովի – սորվի աշխատիլ, համբերել, յարատեւել, դժուարութիւններու դիմանալ, երբեք չյուսահատիլ եւ սորվի բարոյական արժեքներ գնահատել: Որքան կարեւոր է ընտանեկան բարեկրթութիւնը: Ցաւալի է, որ շատ ծնողներ կ'ակնկալեն որ մանուկին յաճախած դպրոցը հայթայրէ այդ կրթութիւնը: Հայր մը տուկուն նկարագիր կերտելու է իր զաւակին մէջ, որպէսզի ան կարենայ դէմ դնել կեանքի պայքարներուն: Խնչպէս մարմինը կը վարժուի վազելով, մազլցելով, իյնալով, ելլելով, նոյնապէս ալ հոգին կը մարզուի դրժուարութիւններով, նեղութիւններով, ձախողութիւններով, վտանգներով, փորորիկներով, արկածներով, ընտանեկան տագնապներով, նիրական նեղութիւններով եւ ասոնց նման բաներով: Ասոնք հաճելի բաներ չեն, բայց այսպիսով մեր հոգեւոր կեանքերը կը զօրանան: Հայրը պէտք է խրատէ ու պատրաստ զաւակը որ կեանքի մէջ յաջող ըլլալու միակ կերպը՝ յօժարիլ է դժուարութիւններու, նեղութիւններու դէմ դնելով է, տոկալով եւ յարատեւելով է: Նոյնապէս ալ մեր Երկնաւոր Հայրը կ'ուզէ որ Իր զաւակները մարզուին հոգեւոր պայքարին մէջ որպէսզի արժանանան երկնային ուրախութեան:

Աստուծ կ'ուզէ որ եկեղեցիները դադրին հիւանդանոցներ ըլլալէ, եւ դառնան զօրանոցներ: Ան կ'ուզէ, որ հաւատացեալներ մոռնան իրենց ցաւերը եւ ուրիշներու ցաւերով հետաքրքրուին: Աստուծ Իր պարտէգին մէջ պէտք եղածէն աւելի կուլոններ ունի: Անոնք պէտք է ծաղկին:

Եթէ հաւատացեալը իր հոգեւոր կեանքին մէջ չծաղկի ու պտուղ չբերէ. երբեք շարունակական խաղաղութիւն եւ ուրախութիւն պիտի չ'ունենայ երկրի վրայ: Ան շարունակ պիտի գանգատի, տագնապի, եւ Աստուծոյ վերաբերմունքը սիսալ հասկնայ: Այսպիսի հոգեւորականներ չեն կըրնար լաւ տպատրութիւն ձգել աշխարհայիններու վրայ եւ դժբախտաբար Աստուծոյ գործը կը տուժէ: Հաւատացեալը իր կեանքով կը վկայէ: Հաւատացեալներ որ կեանքի հնոցէն անցած են, ազդեցիկ վկայութիւններ կ'ունենան: Շարունակական հանգստութիւն, առողջութիւն, յաջողութիւն՝ տոկուն հաւատացեալներ չեն արտադրեր: Մեր Երկնաւոր Հայրը քոյլ կուտայ որ մենք դժուարութիւններու հանդիպինք: Ուկերիչը իր ոսկին կրակին մէջ կը դնէ, ոչ թէ զայն փճացնելու համար, հապա՝ զայն մաքրելու եւ զտելու համար: Երբեմն կը խորիինք որ մեր Հօր վարմունքը անարդար եւ անգութ է, այդ մեզ ցացնելու համար չէ. այլ մեզ դարմանելու համար է: Եբր. 12:5-6 կ'լսէ. «Որդեակ իմ, Տերոջը խրատը մի անարգեր, ու անկէ յանդիմանուելով մի թուլնար: Վասն զի Տերը իր սիրածը կը խրատէ եւ կը ծեծէ ամէն որդին զոր կ'ընդունի», եւ այս՝ ոչ թէ որպէսզի տրտմիք, հապա որպէսզի գիտնաք այն մեծ սէրը զոր Աստուած ունի ձեր վրայ»:

Քաղուած՝ «Հատընտիր հոգեւոր պատգամներ» գիրքէն
Հովհի՝ Արք Գույումնեան

«Ուստի, իմ սիրելի՛ Եղբայրներս, ամէն մարդ թող արագ ըլլայ լսելու մէջ
եւ ծանր՝ խօսելու եւ ծանր՝ բարկանալու մէջ,

Վասն զի մարդուն բարկութիւնը Աստուծոյ արդարութիւնը չի կատարեր:

Ուստի ամէն աղտեղութիւն ու չարութիւն մէկդի ձգելով, հեզութեամբ
ընդունեցէք ձեր մէջ սերմանուած խօսքը, որ կրնայ ձեր հոգիները փրկել:

Խօսքը կատարեցէ՛ք, միայն մի՛ լսէ՛ ինքզինքնիդ խարելով»:

Յակոբոս 1:19-22

Ուր որ Դուն Կ'ուզես Տէր

Sարիներ առաջ դէպի Ալապամա աւետարանչական շրջան մը ըրի: Չատ գիտերու եւ բաղերու մէջ երբեմն օրական հիմք ժամ քարոզած եմ: Առաւօտեան ժամը իննին սկսած, մինչեւ գիշերուայ ուշ ատեն վերջին ժողովս վերջացուցած եմ: Մեծ ամրոխ կը յաճախէր այն աւետարանչական ժողովներուն: Վաճառատուներ, դպրոցներ, իրենց դլուները գոցելով կ'ուղղուէին ժողովավայրը: Աւետարանիչները շատ լաւ գիտեն յոգնիլ ինչ ըսել է: Ես չեմ կրնար հաւատալ թէ մարդ մը որ տրամաբանութիւն ունի, ընտրէ աւետարանիչ ըլլալ, եթէ Աստուծմէ կանչուած ըլլայ:

Օր չէ եղած որ ես առանց հաստատ համոզման ճամբայ ելած ըլլամ: Շաբաթ մը ծանր աշխատանք յետոյ, Ուրբաթ գիշեր մը վերջացուցի ժողովները: Շաբաթ օր պանդոկ մը զացի հանգչելու համար: Երբ ալ պատրաստ էի անկողին մտնելու ինքնիրենս ըսի. «Առաւօտուն կանուխ պիտի ելլեմ՝ եւ պիտի ուղղուիմ դէպի Պիրմենկիամ: Երբ հոն հասնիմ, ինքնաշարժս կարած մը պիտի քողում, մի քանի հատ թերթ եւ ամսաթերթ պիտի գնեմ, պանդոկ մը պիտի երթամ, դրուր վրայէս պիտի գոցեմ ու բոլոր օրը հանգչիմ»: Այդ գիշեր քնացայ: Ցաջորդ առաւօտ կանուխէն արքնցայ, շատ սաստիկ կ'անձրեւէր: Յիշեցի որ գործաւորներ կը նորոգեն ճամբան՝ որ դէպի Պիրմենկիամ կ'երթար: Ճամբան ցեխուտ էր: Ստահոգուած էի: Ինքնիրենս կ'ըսէի թէ արդեօք ապահով պիտի հասնի՞ն հոն: Եթէ այսօր չերթամ վաղը պէտք է որ ճամբորդէմ: Ուստի լաւ կ'ըլլայ, որ հիմա ճամբայ ելլեմ: Անմիջապէս անկողինիս քով ծունկի եկայ ու հետեւեալ աղօքքը ըրի. «Ո՛վ Տէր, օգնէ ինձի որ ապահով անցնիմ այդ ճամբան, ես Քու ծառադ եմ: Քու գործիդ մէջն է որ կը գործեմ»: Աստուածաշունչէն հետեւեալ համարն ալ կարդացի. «Ինչ քան որ աղօքքով կը խնդրէք, հաւատացէք թէ պիտի առնէք եւ պիտի ըլլայ ձեզի» (Մարկ. 11:24): Հիմա ես կը հաւատամ, որ Դուն ապահով պիտի անցնես այդ ճամբայէն: Տէ՛ր, ես Քեզ կը վստահիմ: Անմիջապէս ճամբայ ելայ, կ'անձրեւէր՝ ինքնաշարժս աղտոտ ճամբուն վրայ կը սահէր եւ ուղիղ չէր ընթանար:

Աղօքած էի, վստահ էի որ Տէրը պիտի պահէր իր խոստումը: Կը հաւատայի որ պիտի յաջողիմ անցնիլ Աստուծոյ օգնութեամբ: Սակայն

քիչ վերջ ինքնաշարժս սահելով մխուեցաւ տիղմին մէջ: Կրնաք երեւակայել իմ վիճակս, սկսայ տրտնջալ ու ջղայնանալ Աստուծոյ դէմ: Յաճախ բոլորիս ալ պատահած է ասոր նման քաներ, երբեմն ուզած ենք Աստուծոյ հետ վիճարանիլ ու ինքզինքնիս արդարացնել ջանալ: Ես շարունակեցի մրմռալ, կը մտածի թէ Աստուծ ինչո՞ւ զիս այսպէս ցեխին մէջ ձգեց: Ես իր այզիին մէջն է, որ կը գործեմ: Ես շատերու պէս ցեխը չէի սիրեր, սակայն ստիպուած տարատս սորտեցի եւ մտայ ցեխին մէջ: Շորջս դիտեցի, տեսայ որ քիչ մը անդին իհիդ մը կար: Գացի եւ դուռը զարկի: Մարդը մը ներսէն արտօնեց որ ներս զամ: Երբ ներս մտայ տեսայ որ մարդը շրջապատուած է փոքրիկներով: Պարզեցի իր կացութիւնը, «Ինքնաշարժս ցեխին մէջ միլճուեցաւ, երէ կրնաք ձեր ջորիները տրամադրեցէք, որպէսզի զայն դուրս հանեն»:

Ան պատասխանեց. «Անմիջապէս որ սա փոքրիկները հազցնեմ կուգամ օգնելու ձեզ»: Եւ շարունակեց ըսելով. «Ես փոքրիկ հազցնելու վարժ չեմ, սակայն ստիպուած եմ, երէկ անոնց մայրը կինս թաղեցի: Այս առաջին անգամն է, որ անոնց հազուատները կը հազցնեմ»: Կրնաք երեւակայել այդ հոգեյոյզ եւ սրտաճնիկ տեսարանը որուն ներկայ եղայ: Հայր մը որ մայրութիւն կ'ըներ իր ձագուկներուն: Աստուած կարծես այր մարդուն ձեռքերը այդ գործերուն համար չէ շինած: Պահ մը զայն դիտելէ վերջ ըսի. «Ես թեզի կ'օգնեմ»: Նստայ աքռուակի մը վրայ, փոքր աղջիկը կայնեցուցի քովս որ սեւ աչքեր ու մազեր ուներ: Անոր աչքերէն արցունքներ կը վազեին այտերը թրջելով: Աղճակը կուլար մօրը համար: Ես մայրս կ'ուզեմ կ'ըսէր: Թաշկինակովս սրբեցի արցունքները, մազերը սանտրեցի, գուլպաները հազցուցի որոնք ծակերով լեցուն էին: Սի քանի փաղաքշական խօսքերէ եսք կօշիկներս ալ հազցուցի որոնցմէ խեղճ աղջնակին մատները դուրս կ'ելլին: Ան սկսաւ ժպտիլ ինձի: Նոյնպէս փոքրիկ մանչուկն ալ հագցուցի: Քիչ յետոյ հայրը ըսաւ. «Հիմա կրնանք երթալ եւ ինքնաշարժդ ցեխին հանել»:

Երբ դուռը հասանք հարցուցի իրեն. «Վայրկեան մը, դուք փրկուա՞ծ էք», ան պատասխանեց. «Ո՛չ պարոն, բայց իմ կինս շատ հաւատարիմ քրիստոնեայ մըն էր: Այդ անկինին մահիճը կը տեսնէ՞ք, ան զիշերները արքուն ժամերով իմ փրկութեանս համար կ'աղօրէր Աստուծոյ եւ լալով կ'աղաղակէր»: Շատ լաւ, ըսի իրեն, պահ մը ջորիները եւ իմ ինքնաշարժս մոռնանք: Աստուածաշունչս հանելով կարդացի անոր

Քրիստոսի սիրոյն վրայով: Ան համոզուեցաւ որ ինք մեղաւոր մըն էր: Այն պահուն փրկուեցաւ՝ ընդունելով Յիսուսը իբր իր անձնական Փրկիչը:

Ան խոստացաւ ինծի յաջորդ Կիրակի եկեղեցի երթալ, նոյնպէս փոքրիկները Կիրակնօրեայ դպրոց տանիլ: Դարձեալ ըսաւ թէ ժողովուրդին մէջ վկայելով իր փրկութիւնը եկեղեցիին պիտի անդամակցէր:

Այս դէաքով Տէրը ինծի հասկցուց թէ ես ինչո՞ւ ցեխին մէջ ինկած էի: Այդ մօրը աղօքքը իմ աղօքքէս առաջ Երկինք հասած էր: Իմ աղօքքը մէկդի դրուած էր: Մենք չենք կրնար այսախի աղօքքի մը դէմ աղօքել: Աստուած ըսած էր քող քու աղօքքիդ պատասխանը քիչ մը ուշանայ, առաջ այդ աղախինիս աղօքքը պիտի պատասխանուի, յետոյ քուկու:

Ես չգիտնալով ու չհասկնալով Աստուծոյ կարգադրութիւնը Անոր դէմ կ'ուզէի գործել: Շատ անգամ քոլորս ալ մի՞թէ նոյն սխալին մէջ չենք ինար: Տէրը քող առաջնորդէ մեզ ո'ւր որ Ինք կ'ուզէ եւ Իր կամքին յօժարեցնէ ամէն ատեն:

Քաղուած

ԱՅՆ-Ի ԼՈՒՐԵՐ

Փառ կուտանք Տէրոջը այն ամէնուն համար, ինչ այս վերջին 3 ամիսներուն կարողացանք ընել Հայաստանի մէջ Տէրոջը ծառայելու ընթացքին: Մեր աշխատակիցները զբաղուած էին աղքատներուն ու կարիքաւորներուն ծառայելով. Աւետարանը սորվեցնելով, մանուկներուն համար սուրբքոց դասարաններ կազմակերպելով եւ շատ աելին: Ծնորհակալութիւն կը յայտնենք ձեր աղօքքներու եւ աջակցութեան համար եւ կը խնդրենք շարունակել ձեր այդքան անհրաժշտ աղօքքները Մայիս ամսուայ համար:

Վրէժք Վանաձոր քաղաքի մեր խնամակալութեան տակ գտնուող ընտանիքի հայրն է: Անոնք իրենց ողջ կեանքը անցուցած են մետաղեայ տնակի մէջ՝ առանց պատուհաններու, առանց դրներու: Չորս զաւակ ունի, չորրորդը երկու ամիս առաջ ծնած է: Հովանաւոր մը իր ցան-

կութիւնը յայտնեց, որ իրենց համար տուն մը զնէ: Անցեալ շաբաթ Վրեժն ու իր կինը այցելեցին այն տունը, որը գնեցինք իրենց համար: Արցունքներով երախտապարտ էին Տերոջը, որ իրենց այնպիսի քան մը նուիրեց, որու մասին երբեք չէին երազած: Կը խնդրենք ձեր աղօքք-ներուն մէջ յիշէք Վրեժն ու իր կնոջը՝ Անուշիկին:

Կիւմրի քաղաքի մեր շէնքին մէջ ունեցանք CEF-ի առաջնորդներու վերապատրաստման դասընթաց: Վանաձորի երկու աշխատակիցներուն հրամիրեցինք, որպէսզի մասնակցէին այս եռօրեայ դասընթացին: Կը խնդրենք աղօքել այս երիտասարդներուն համար, ովքեր վերապատրաստուեցան, որպէսզի Տերը օգտագործէ իրենց մանուկներուն մէջ:

Ուղերեւներու ծառայութիւնը երթալէն կը դժուարանայ՝ նաւերու սակաւութեան եւ ճանապարհածախսի արժեքի գրեթէ կրկնապատիկ դառնալու պատճառով: Երեք ամիս սպասեցինք, եւ պարզուեցաւ, որ պէտք է \$15,000 վճարենք: Մեր յաջորդ բեռնարկող երկու ամիսէն պատրաստ պիտի ըլլայ: Զեր աղօքքները շատ անհրաժեշտ են այս աշխատանքի համար: Կը խնդրենք աղօքել նաև Սիտնիյի պահեստի համար, քանի որ պահեստային տարածքը սպառուած է:

Ուսանողներ. տարիներու ընթացքին շուրջ 19 ուսանողի բարձրագոյն կրթութեան վարձքին օժանդակած ենք: Անոնցմէ շատերը այժմ աշխատանք ունին: Վեցը դեռ կը սորվին համալսարանին մէջ: Եթէ կը փափարքի ուսանողի մը հովանաւորել, ապա կը խնդրեմ կապ հաստատել մեզի հետ:

Առողջական խնդիրներ. Մեր հովանաւորութեան տակ գտնուող կարիքաւոր ընտանիքներէն շատերը առողջական խնդիրներ ունին՝ տարեցներ, երիտասարդներ, ծնողներ եւ զաւակներ: Վանոնաւոր դեղորայքը կարեւոր է, բայց շատ ծախսատար է: Անցած երեք ամիսներուն 15 հիւանդի դեղորայքով ապահովեցինք, ոմանք վիրահատութեան ենթարկուեցան, եւ այժմ կը հոգանք անոնց տնային խնամքի ծախսերը: Կը խնդրենք աղօքել այս ծառայութեան եւ բոլոր ներգրաւուածներու համար: Եթէ կը փափարքի հիւանդի մը հովանաւորել, ապա կը խնդրեմ կապ հաստատել մեզի հետ www.acmaust.org կայքի միջոցով:

Քրիստինան Կիւմրիի փոքրիկ գիւղերէն մէկու բնակիչն է: Տունը հին

է ու անյարմար ապրելու համար: Փայտէ յատակը անցքեր ունի, եւ այդ անցքերէն բունաւոր օձեր կը մտնեն տան մէջ: Մի քանի մեծ վերանորոգման աշխատանքներ կատարեցինք եւ յատակը պետոն լեցուցին, որպէսզի օձերը չմտնեն ու չթունաւորեն մանուկներուն:

Զատիկի խմբակներու մանուկներու համար. ինը գիտ ընտրեցինք յարութեան աւետիսը տարածելու համար: Խաղեր պատրաստեցինք 560 մասնակից մանուկներու համար: Սենք կ'ուզենք այդ մանուկներուն նույրներ բաժնել: Կը խնդրենք աղօթել ճանապարհորդութեան անվտանգութեան համար՝ թէ՝ կազմակերպիչներու եւ թէ մասնակիցներու համար:

Աւետարան. փառք Տէրոջը, որ Աւետարանը կենդանի է: Այն կը դիպչի ու կը փրկէ մարդկանց: Հանդիպումներ տեղի ունեցան Վանաձորի, Կիւմրիի, Երևանի, Սեւանողերի եւ Էջմիածնի մէջ: Նորակերտը նոր գիտ է, որտեղ սկսանք Աւետարանը տարածել: Չորս հոգի եկան Տէրոջ մօս, եւ այժմ կանոնաւոր հանդիպումներ կ'ունենք անոնց համար: Աղօթեցէք Աշոտի, Մարտունի եւ Թոմիկի համար, որ Տէրը զօրացնէ իրենց Իր Հոգիով, մինչ Աւետարանը կը քարոզեն:

ACM-ի կենտրոն. երկու տարի է եկեղեցիներէն տարածք կը խնդրենք մեր ընտանիքներուն հաւաքելու եւ մանկական ծառայութիւնները կազմակերպելու համար: Մեր բեռները պահելու համար տեղ չունինք: Մեր աշխատակիցները շատ դժուարութիւններու կը հանդիպին տունէն աշխատելու ընթացքին: Մեզ գումար նուիրած են յարմար շենք մը գնելու համար: Մենք շնորհակալ ենք Տէրոջը մեր աղօքքները լսելու եւ մեր կարիքներուն արձագանքելու համար: Կը խնդրենք միանալ մեզ աղօքքով, որպէսզի Տէրը մեզ շենք մը ցոյց տայ, որը յարմար կ'ըլլայ ACM-ի եւ՝ ներկայ, եւ՝ ապագայ ծառայութիւններուն համար:

Միսիոնարական ծառայութիւն. Համաճարակի պատճառով երկու տարի չկարողացանք կազմակերպել միսիոնարական ճանապարհորդութիւններ: Այս տարուայ Յուլիս-Օգոստոս ամիսներուն կը ծրագրենք նման առաքելութիւն ունենալ Աստուծոյ կամքով: Եթէ կը փափաքիք միանալ մեզ, ապա կը խնդրեմ մեզի հետ շուտ կապ հաստատել, քանի որ սահմանափակ տեղեր ունինք: